ՀՍԽՀ ԼՈՒՍԱԺՈՂԿՈՄԱՏ
ՏԱՐՐԱԿԱՆ ՃԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԵՐ

ԳՐԱԿ VI

ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ա-VII ԴԱՍԱՐԱՆ

373
Մ-73

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1936

73

Գլխ. խմբագիր՝ Ավ. Ծուղուբյան
Տեխ. խմբագիր՝ Գ. Զեճյան
Լեզվ. խմբագիր՝ Հ. Պետրոսյան
Սրբագրիչ՝ Ա. Արզաքանյան

2660
38

Հրատ. 3576, Գրավիճակ.—341, Պատվ. 1380, Տիրաժ 1,000

Հանձնված է արտադրության 22 դեկ. 1935 թ.
Ստորագրված է տպագրության 11 հունվ. 1936 թ.

Պետհրատի տպարան, Երևան, II Գնունի 4

0120-10

373
Մ-73

ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

(5—7 դասարաններ)

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Նկարչության դասավանդման նպատակն է աշակերտներին սովորեցնել գրագետ, ճիշտ և պարզորոշ կերպով բնականից ու հիշողությամբ (պատկերացումով) զանազան առարկաներ նկարել գիտության և տեխնիկայի նպատակների համեմատ։ Դրա համար անհրաժեշտ է սիստեմատիկորեն զարգացնել աշակերտների տեսողական հիշողությունը, տեսնելու և դիտելու հմտությունները՝ վորպես անհրաժեշտ նախադրյալներ վոչ միայն գեղարվեստի, այլև գիտության ու տեխնիկայի ամեն մի բնագավառում աշխատելու համար։

Դրա հետ միասին միջնակարգ դպրոցում նկարչությունը պետք է հնարավորություն ընձեռնի աշակերտների իրենց ստացած ունակություններն ու հմտությունները կիրառելու նաև նկարչական ստեղծագործական աշխատանքների, թեմատիկ նկարների և դեկորատիվ ձևավորման առաջադրությունների բնագավառում։

Միջնակարգ դպրոցն աշակերտներին պետք է սովորեցնի նաև հասկանալ ու գնահատել կերպարվեստի ինչպես ներկայիս, այնպես և անցյալի արտադրությունը. ուստի վորոշ ժամեր պետք է հատկացնել արվեստագիտական աշխատանքներին, և այդ հանդամանքը կբարձրացնի աշակերտի ընդհանուր կուլտուրական մակարդակը և կզարգացնի նրա մեջ ընդհատակական վերաբերմունք դեպի կերպարվեստի բնագավառի գեղարվեստական արտադրությունը։

Հիշյալ նպատակի կապակցությամբ կերպարվեստի դասավանդումը միջնակարգ դպրոցում պարունակում է հետևյալ յերեք հիմնական բաժինները.—

1. Կերպարվեստի գրագիտության հիմունքները.

01 JUL 2013

ա) ձևի ուսումնասիրություն (առանձին առարկաների և մի խումբ առարկաների նկարումները), բ) գույնի ուսումնասիրություն։

2. Կոմպոզիցիոն նկարչություն։

ա) Թեմատիկ նկարչություն։

բ) Դեկորատիվ-ձևավորման առաջադրություններ։

3) Ծանոթություն գեղարվեստական նմուշներին, որինակներին։

ԾՐԱԳԻՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

I. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ՁԵՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (12 ժամ)

1. Ներածական զրույց՝ զննական իրերի ցուցադրումով, աշակերտներին ծավալային առարկաներ նկարելու միջոցները պարզելու համար (պատկերող հարթության հատկությունները։)

Զուգահեռանիստ (լուցկու տուփ)։ Նկար բնականից։

Դիտողություններ տուփի ձևերի տեսանելի փոփոխությունների՝ տուփի դիրքը փոփոխելիս։ Կողմերի, կողերի և անկյունների փոփոխվելը։ Հետագա նկարումներն ըստ պատկերացման՝ լուցկու տուփը տարբեր դիրքերում դրված (1 ժամ)։

2. Խոշոր և մանր առարկաներ, որոնք զուգահեռանիստի ձև ունեն տարբեր մեծության ու համաչափության տուփեր, արկղեր ճամբրուկներ (չեմոդաններ), մեծ գրքեր։

Նկարումներ բնականից, դիտողություններ ձևի տեսանելի փոփոխության նկատմամբ առարկան այս կամ այն կողմ դարձնելիս ու թեքելիս։

Նկարչություն ըստ պատկերացման՝ զանազան դիրքերում (1. ժամ)։

3. Պատկերել զուգահեռանիստի $^1/_2$, $^1/_4$ և $^1/_8$ մասը։ Նկարչություն ըստ պատկերացման։

4. Գլան. Նկարել բնականից։ Դիտողություն գլանի հիմքի (շրջանի) տեսանելի փոփոխության՝ գլանի դիրքը փոփոխելիս։

Նկարել ըստ պատկերացման՝ զանազան դիրքերում։

5. Գլանին մոտիկ ձև ունեցող խոշոր և մանր առարկաներ (գավաթ, դույլ, թանաքաման, բանկա, փայտի կառը)։

Նկարել առանձին առարկաներ բնականից և պատկերացմամբ, զանազան դիրքերում (1 ժամ)։

6. Բնականից նկարել մի խումբ առարկաներ (գլանաձև առարկա և ուղղանկյան ծավալային ձև ունեցող առարկա), նկարել նույն առարկաների, բայց այլ ձևով դասավորված՝ խումբը (պատկերացմամբ։)

7. Նկարել գլանաձև առարկաների վրա դրած յերկրաչափական պատկերներ (որինակ՝ բանկաներ, կամ տուփ պիտակով (ետիկետով) (1 ժամ)։

8. Մի զույգ անիվներ առանցքով։ Մոդել։ Բնականից և ապա ըստ պատկերացման նկարել զանազան դիրքերում։

9. Կոն։ Նկարել բնականից։ Նկարել զանազան դիրքերում ըստ պատկերացման (1 ժամ)։

10. Կոնաձև խոշոր և մանր առարկաներ նկարելը (ծաղկաման, բարձրախոս, կաթսա, թեյաման, ելեկտրական լամպ և այլն (1 ժամ)։

11. Խոշոր և մանր առարկաներ՝ համակցված ձևով (կոնի և գլանի, յերկու գլանի միացում և այլն. ձագար, բիտոն, շիշ, սրճաման, կոճ և այլն)։ Զանազան դիրքերում բնականից և ըստ պատկերացման նկարելը (2 ժամ)։

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՅԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հասկացողություն պատկերող հարթության մասին։

2. Կարողանալ յերկրաչափական մարմիններ նկարել՝ զուգահեռանիստ, գլան, կոն, զանազան դիրքերում և զանազան դարձումներում, ճիշտ տալով կողերի ուղղությունը, հիմքի և նախատերի կրճատումը։

3. Կարողանալ յերկրաչափական մարմիններ նկարելու ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ոգտագործել կենցաղային և արտադրության վերաբերյալ առարկաներ նկարելու համար։

4. Կարողանալ բնականից և ըստ պատկերացման զանազան առարկաներ նկարելիս տալ առարկայի և նրա մասերի համաչափությունը, առարկայի կառուցվածքը (կազմությունը) և մեծության հարաբերակցությունն առարկաների միջև։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կերպարվեստային գրագիտության նպատակն և աշակերտներին սովորեցնել նկարել առանձին առարկաներ և առարկաների

01 JUL 2013

51.465

ա) ձևի ուսումնասիրություն (առանձին առարկաների և մի խումբ առարկաների նկարումներ), բ) գույնի ուսումնասիրություն։

2. Կոմպոզիցիոն նկարչություն։

ա) Թեմատիկ նկարչություն։

բ) Դեկորատիվ-ձևավորման առաջադրություններ։

3) Ծանոթություն գեղարվեստական նմուշներին, որինակներին։

ԾՐԱԳԻՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

I. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ՁԵՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (12 ժամ)

1. Ներածական զրույց՝ զննական իրերի ցուցադրումով, աշակերտներին ծավալային առարկաներ նկարելու միջոցները պարզելու համար (պատկերող հարթության հատկությունները։)

Զուգահեռանիստ (լուցկու տուփ)։ Նկար բնականից։

Դիտողություններ տուփի ձևերի տեսանելի փոփոխությունների՝ տուփի դիրքը փոփոխելիս։ Կողմերի, կողերի և անկյունների փոփոխվելը։ Հետագա նկարումներն ըստ պատկենրացման՝ լուցկու տուփը տարբեր դիրքերում դրված (1 ժամ)։

2. Խոշոր և մանր առարկաներ, որոնք զուգահեռանիստի ձև ունեն տարբեր մեծության ու համաչափության տուփեր, արկղեր ճամբրուկներ (չեմոդաններ), մեծ գրքեր։

Նկարումներ բնականից, դիտողություններ ձևի տեսանելի փոփոխության նկատմամբ առարկան այս կամ այն կողմ դարձ նելիս ու թեքելիս։

Նկարչություն ըստ պատկերացման՝ զանազան դիրքերում (1. ժամ)։

3. Պատկերել զուգահեռանիստի $^1/_2$, $^1/_4$ և $^1/_8$ մասը։ Նկարչություն ըստ պատկերացման։

4. Գլան։ Նկարել բնականից։ Դիտողություն գլանի հիմքի (շրջանի) տեսանելի փոփոխության՝ գլանի դիրքը փոփոխելիս։

Նկարել ըստ պատկերացման՝ զանազան դիրքերում։

5. Գլանին մոտիկ ձև ունեցող խոշոր և մանր առարկաները (գավաթ, դույլ, թանաքաման, բանկա, փայտի կտոր)։

Նկարել առանձին առարկաներ բնականից և պատկերացմամբ, զանազան դիրքերում (1 ժամ)։

6. Բնականից նկարել մի խումբ առարկաներ (գլանաձև առարկա և ուղղանկյան ծավալային ձև ունեցող առարկա), նկարել նույն առարկաների, բայց այլ ձևով դասավորված՝ խումբ (պատկերացմամբ։)

7. Նկարել գլանաձև առարկաների վրա դրած յերկրաչափական պատկերներ (որինակ՝ բանկաներ, կամ տուփ պիտակով (ետիկետով) (1 ժամ)։

8. Մի զույգ անիվներ առանցքով։ Մոդել։ Բնականից և ապա ըստ պատկերացման նկարել զանազան դիրքերում։

9. Կոն։ Նկարել բնականից։ Նկարել զանազան դիրքերում ըստ պատկերացման (1 ժամ)։

10. Կոնաձև խոշոր և մանր առարկաներ նկարելը (ծաղկաման, բարձրախոս, կաթսա, թեյաման, էլեկտրական լամպ և այլն (1 ժամ)։

11. Խոշոր և մանր առարկաներ՝ համակցված ձևով (կոնի և գլանի, յերկու գլանի միացում և այլն. ձագար, բիտոն, շիշ, սրճաման, կոճ և այլն)։ Զանազան դիրքերում բնականից և ըստ պատկերացման նկարելը (2 ժամ)։

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՅԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հասկացողություն պատկերող հարթության մասին։

2. Կարողանալ յերկրաչափական մարմիններ նկարել՝ զուգահեռանիստ, գլան, կոն, զանազան դիրքերում և զանազան դարձումներում, ճիշտ տալով կողերի ուղղությունը, հիմքի և նեստերի կրճատումը։

3. Կարողանալ յերկրաչափական մարմիններ նկարելու ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ոգտագործել կենցաղային և արտադրության վերաբերյալ առարկաներ նկարելու համար։

4. Կարողանալ բնականից և ըստ պատկերացման զանազան առարկաներ նկարելիս տալ առարկայի և նրա մասերի համաչափությունը, առարկայի կառուցվածքը (կազմությունը) և մեծության հարաբերակցությունն առարկաների միջև։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կերպարվեստային գրագիտության նպատակն է աշակերտներին սովորեցնել նկարել առանձին առարկաներ և առարկաների

խումբ այնպես, որ նկարով կարելի լինի հնարավոր չափով ճիշտ դատել ձևի, համաչափության և այդ առարկաների դիրքի մասին։

Ուսուցչի գլխավոր նպատակը պետք է լինի աշակերտներին սովորեցնել ճիշտ (հաշվի առնելով պատկերող հարթության հատկությունները) նկարել առարկաները՝ տալով նրանց ծավալը (յեռաչափությունը)։

Նկարների վերարտադրության ցուցադրումն ուսանողներին կոգնի ըմբռնել թղթի հարթ մակերեսի վրա խորության տպավորությունը տալու հնարավորությունը։ Պատկերացման հարթության նույն հատկությունները ցույց տվող մի ուրիշ որինակ. ուղիղ վեցանկյունին բաժանված յերեք անկյունագծերով, որը հասկացվում է յերբեմն որպես հարթ վեցանկյունի, յերբեմն էլ որպես թափանցիկ խորանարդ։

Գլանաձև և ուղղանկյան ձև ունեցող առարկաներ դիտելիս և նկարելիս անհրաժեշտ է աշակերտների ուշադրությունը դարձնել շրջանի (գլանի և կոնի հիմքերը) և նիստերի կրճատման ու կողերի ուղղության վրա, որը կախված է տարածության մեջ առարկայի դիրքի փոփոխությունից։

Նկարի ճիշտ կառուցումը հետապնդելու նպատակով դասատուն ցույց է տալիս, որ բնականում յեղած ուղղահայաց ուղղությունը նկարում պետք է պատկերվի նույնպես ուղղահայաց։

Զուգահեռանիստի ու գլանի ձևի առարկաներ նկարելուց հետո, անհրաժեշտ է նույն առարկաները նկարել այլ առարկաների հետ միասին, մի խումբ առարկաների հետ։ Ըստ որում անհրաժեշտ է աշակերտներին առաջարկել համադրել և համեմատել այդ առարկաների ձևերը, նրանց մեծության փոխհարաբերությունը և դասավորությունը տարածության մեջ։

Նույն առաջադրությունները պետք է կատարել նաև կոնաձև առարկաներ նկարելուց հետո։ Այդ նպատակով աշակերտներին առաջադրվում է նկարել մի խումբ զանազան ձևի առարկաներ։ Ցուրաքանչյուր որյեկտի նկատմամբ աշխատանքը տարվում է հետևյալ սխեմայով։

1. Տեսողական և ըստ հնարավորության (յեթե խոսքը փոքր առարկաների մասին է) շոշափողական ծանոթություն առարկայի հետ։

2. Դիտել ձևի տեսանելի փոփոխվումը՝ առարկայի դիրքից կախված։

3. Բնականից նկարելը։

4. Առարկան տարբեր դիրքում նկարելը՝ ըստ պատկերացման։

Ցուրաքանչյուր պարապմունքից հետո անհրաժեշտ է աշակերտներին առաջադրություններ տալ ինքնուրույն մշակման համար (տանը)։

Առաջադրությունը կազմվում է դասարանական աշխատանքի որինակով, սակայն տրվում են այլ որյեկտներ (որինակ, դասարանում մի զույգ անիվ և առանցք նկարելուց հետո առաջադրվում է տանը նկարել յերկաթուղային ցեխաերն, վագոն, կամ տրակտոր և այլն)։

2. ՄԱՐԴՈՒ ՈՒՐՎԱԳԾԵՐ ՆԱԲՐՈՍՈԿ ՏԱԼԸ

1. Ուրվագիծ բնականից։ Մարդը նստած է (նկարը ըստ պատկերացման), մարդը կանգնած է (2 ժամ)։

2. Ուրվագիծ բնականից։ մարդը կանգնած է (նկարը ըստ պատկերացման), մարդը կռանում է, (2 ժամ)։

3. Ուրվագիծ բնականից։ Մարդը կռանում է, հատակից առարկա յե վերցնում, և մարդը՝ վոտքը սանդուխքի վրա դրած։

4. Նկարել ըստ դիտողության և պատկերացման։

Մարդը գնում է. մարդը վազում է (1 ժամ)։

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՅԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կարողանալ տալ բնականից և ըստ պատկերացման մարդու պատկերի ուրվագծերը, պահպանելով մարդու ձևապատկերի (ֆիգուր) հիմնական համաչափությունները։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնականից ուրվագծելու համար հերթով համապատասխան կեցվածք են ընդունում իրենք՝ աշակերտները։ Մի դասում կարելի յե 3—4 ուրվագիծ տալ։ Ուրվագծի համար մի դասի ընթացքում վերցվում է միևնույն կեցվածքը, բայց զանազան դարձումներով (поворот)։

Ըստ պատկերացման նկարելիս՝ մարդը պատկերում են նույն կեցվածքում, ինչ կեցվածքում հաջորդ դասերին պետք է նկարեն բնականից։

Ինչ վերաբերում է ըստ պատկերացման նկարելու քանակին, ապա կարելի յե միևնույն շարժումը մի քանի անգամ նկարել (ուսումնասիրելու նպատակով), կամ մարդ նկարել զանազան շարժումներում։

Տանը մարդ նկարելու համար առաջադրվում է մարդ նկարել վոչ առանձին, այլ վորևե մի թեմատիկ կոմպոզիցիայում։ Նկարները կատարվում են վոչ կարծր կապարե մատիտով։

II. ԳՈՒՅՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (10 ժամ)

1. ԲՆԱԿԱՆԻՑ ՆԵՐԿԵՐՈՎ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՌԱՐԿԱՆԵՐ ՆԿԱՐԵԼԸ (8 ժամ)

Նկարելու օբյեկտների որինակներ

1. Բանջարեղեններ և պտուղներ (ղդում, բազրջան, գազար, տաքտեղ, խնձոր, տանձ, ձմերուկ, սեխ և այլն)։

2. Սպորտի և մանկական կենցաղի առարկաներ (վալեյբոլի գնդակ, թմբուկ, տուփ և այլն)։

3. Ուսումնական պարագաներ—սեղանի լամպ՝ կանաչ լուսամփոփով, գիրք, ներկերի տուփ և այլն։

4. Տնտեսական իրեր։

ա) Պուլիկ, կամ գավաթ՝ գունավոր ֆոնի վրա։

բ) Կանաչ գույնի շիշ, ուղղանկյան ձևի բիտոն և ձագար՝ գունավոր ֆոնի վրա (կարմիր)։

գ) Բույսը ծաղկամանում, սպիտակ գավաթ (գունավոր ֆոնի վրա)։

Ըստ գույնի առարկաների խումբն այնպես է կառուցվում, վոր դյուրացվի գույների հակադիր հարաբերակցության ըմբռնումն աշակերտների կողմից։

2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2 ժամ)։

1. Ջրաներկերի աղյուսակ կազմելը (գույներ և անուններ)։

2. Պալիտրայի վրա ներկերը խառնելու միջոցով ածանցյալ գույն ստանալը և 10 սմ × 3 սմ չափսի ուղղանկյունիները ածանցյալ գույներով ներկելը (մեխանիկական խառնուրդ)։

3. Ածանցյալ գույներ ստանալը՝ համապատասխան գույներով շրջաններ ներկելով. յերբեմն շրջաններն իրենց մասերով ծածկում են իրար (խառնուրդ գույներից մեկը մյուսի վրա դնելու ոգնությամբ)։

4. Դիտել արևի լուսապատկերը (սպեկտր) լուսակաղիտակով և նկարել աղյուսակի վրա։ Ծանոթություն տալ սառ հակադիր գույների։

Դիտելիքներ յեվ ունակություններ

1. Կարողանալ բնականից նկարելու ժամանակ ուղղանկյան ձև ունեցող առարկաների նիստերը կլոր առարկաների լուսավորված ու վոչ լուսավորված տեղերը գույնով առանձնացնել։

2. Կարողանալ բնականից նկարելու ժամանակ տալ հակադիր գույների հարաբերակցությունն առարկաների խմբում։

3. Կարողանալ բնականից նկարելիս գործադրել խառնելու միջոցով ստացված ածանցյալ գույները։

4. Կարողանալ տարբերել տաք և սառ գույները։

5. Դիտենալ գույները և ջրաներկերի անունները։

6. Հասկացողություն ունենալ գույներն իրար վրա դնելու միջոցով ածանցյալ գույներ ստանալու մասին։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գույնն ուսումնասիրելու վարժություններին հատկացվում է 15—20 րոպե՝ մինչև բնականից ներկերով նկարելը։ Վարժությունները պետք է համապատասխանեն աշակերտներին առաջադրված խնդիրներին՝ բնականից նկարելու վերաբերյալ։

Առարկաները, խմբում նկարելու համար, պետք է լինեն պարզ և ամբողջական ձևով ու գույնով, առանց նաշխերի ու զարդարանքների և իրենց դերսվու նշանակությամբ պետք է նման լինեն։

Լուսապատկերն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ունենալ նրա աղյուսակը՝ մեծ չափերով, ամբողջ դասարանին ցուցադրելու համար (նման աղյուսակ կարող է պատրաստել ինքը դասատուն)։

Գույնն ուսումնասիրելու ունակություններն ամրապնդելու համար կարելի յե լրացուցիչ պարապմունքներ անցկացնել, և աշակերտներն այդ մասամբ կարող են տանը կատարել, որինակ՝ շերտի վրա նախշեր հորինելը (հաշիա) յերկրաչափական պատկերներից, վորոնք իրար վրա յեն դրված և ներկված հիմնական ու ածանցյալ գույներով, կամ կարող են տեքստ ունեցող գունավոր հարթություններով պլակատ նկարել։

III. (ԿՈՄՊՈԶԻՑԻՈՆ ՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ (6 ժամ)

1. Թեմատիկ նկար հիշողությամբ յեվ դիտողությամբ (3 ժամ)

Պատկերել մարդիկ՝ կենցաղային վորոշ միջավայրում (սահ-

մանափակ տարածություն)։ Վորպես որինակ կարելի է վերցնել հետևյալ թեմաները. «մեր բակը», դպրոցամերձ հողամասը կանաչապատելը», «պիոներական ճամբար»։

2. Նկար գրական յերկերի թեմաների շուրջը (3 ժամ)

Վորպես թեմայի որինակ. Զարենց—«Բալլադ գնդապետ Տոմսոնի, կոմյերիա տղի և գործադուլի մասին» Դեմիրճյան—«Բարհատներ», Զորյան—«Յերկաթուղի», Նալբենց—«Սահմանապահը», Հյուգո—«Գավրոշը»։

Գիտելիքներ յեվ ունակություններ

1. Կարողանալ կոմպոզիցիոն—թեմատիկ նկարում կիրառել այն գիտելիքներն ու ունակությունները, վոր ձեռք են բերված կերպարվեստային գրագիտության գծով առարկաների գույներն ու ձևերն ուսումնասիրելիս։

2. Կարողանալ դիտել և հիշողությամբ ձևավորել իր դիտողությունները նկարում։

3. Կարողանալ գրական յերկում դրսևորել ամենացայտուն բնորոշ մոմենտները և ձևավորել նկարում։

4. Կարողանալ պատկերելու համար ընտրել ամենից շատ բնորոշ և նշանակություն ունեցող առարկաները, դեն գցելով վոչ բնորոշն ու ավելորդը։

Մեթոդական ծանոթություններ

Իլյուստրատիվ նկարչության ժամանակ, յենթադրվում է, վոր նախորդք պետք է ծանոթացնել այն գրական յերկին, վորի նկատմամբ իլյուստրացիաներ են պատրաստում։

Ծանոթ պատկերները. գործող անձանց բնավորությունները և գործողության վայրը յերեխաների հիշողության մեջ թարմացնելու համար անհրաժեշտ է, վոր դասատուն աշակերտների հետ անցկացնի համապատասխան զրույց, նույնիսկ կարդա իլյուստրացիաների համար ընտրված գեղարվեստական յերկի համապատասխան կտորները։

Այս աշխատանքների ժամանակ պետք է մեծ ուշադրություն դարձնել, վոր աշակերտները խորհեն, թե ինչպես պետք է դասավորել նկատած որյեկտները թղթի վրա։

Դասատուն պետք է մատնանշի պատկերելու համար գլխավորը, ամենից շատ բնորոշն ընտրել կարողանալու անհրաժեշտությունը, առանձնացնել սա այդ գլխավորը նկարում, վոչ միայն

նրան նկարում հատուկ տեղ հատկացնելու համար, այլ և գույն տալու համար։

Գույների վրա աշխատելիս ցանկալի է աշակերտների ուշադրությունը դարձնել լանդշաֆտի բնորոշ առանձնահատկությունների և գործողության ժամանակի վրա (որինակ՝ Լոռին և Թումանյանի «Դիքորը»—լեռներ, բույսեր. ժամանակը—յերեկո, ցերեկ և այլն)։

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

I. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (11 ժամ)

1. ՁԵՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

1. Գունդ (նկարչություն բնականից). գնդի բևեռ. կենտրոնով անցնող յերկու ուղղահայաց հարթությունների միջոցով գունդը մասերի բաժանելը։ Նկարել գնդի մասերը (նկարչություն պատկերացումով) (1 ժամ)։

2. Քուզ (շնուր) հանգույցներ և զանազան հյուսվածքներ (1 ժամ) ։Նկարչություն դիտողությամբ։

3. Խորանարդ՝ նիստերում ներգծված շրջաններ (1 ժամ)։ Նկարչություն դիտողությամբ։

4. Բնակարանի ներքին տեսքը՝ կտ—կարասիքով։ Դպրոցական սեղանատուն, դպրոցական դահլիճ՝ կահույքով (նկարչություն դիտողությամբ և հիշողությամբ) (2 ժամ)։

5. Փողոց, կամ յերկաթուղագիծ (նկարչություն հիշողությամբ և դիտողությամբ)։ Հեռանկարի (перспектив) յերևույթների ուսումնասիրություն (2 ժամ)։

6. Որգանական աշխարհի առարկաներ—ճյուղ, տերև, պտուղ, բանջարեղեն, խոշոր ծաղիկներ, բզեզ, խեցի (նկարչություն բնականից) (2 ժամ)։

7. Թռչուններ—ուրվագծեր (2 ժամ)։

Գիտելիքներ յեվ ունակություններ

1. Կարողանալ բնականից, կամ զննական պարագաներն ոգտագործելով նկարել միջատներ և բույսեր՝ զանազան դիրքերում պահպանելով կազմությունը, համաչափությունները և բույսերի ու միջատների բնորոշ ձևերը։

2. Կարողանալ տալ առարկաների տարածական հարաբերակցությունը։

3. Կարողանալ նկարում հաշվի առնել հիմնական հորիզոնական գծերի ուղղությունը, նայած տեսողական կետին հորիզոնից բարձր—հեռացվող ուղղությունը՝ դեպի ցած հորիզոնից ցածր—հեռացվող ուղղությունը՝ դեպի վեր։

Մեթոդական ծանոթություններ

Պատկերող հարթության նշանակության վերաբերյալ արած գիտողությունները և առանձին օբյեկտի վրա աշխատելու սխեման, վորոնք ցույց են տրված 5-րդ դասարանի ծրագրի համապատասխան բաժնում, մնում են ուժի մեջ կերպարվեստային գրագիտության ուսուցման վողջ տևողության ընթացքում։

Բուսական աշխարհի օբյեկտները և միջատները նկարվում են բնականից՝ կենդանի կամ չորացած բույսերից, իսկական բանջարեղեններից, մրգերից կամ մոդելներից, կենդանի միջատներից կամ կոլեկցիայի օրինակներից։ Ծայրահեղ դեպքում այդ բոլորը կարելի յե փոխարինել պատրաստի նկարներով (լուսանկարներ, կամ ուսումնական պարագաներում յեղած աղյուսակներ) այն պայմանով, վոր այդ պատկերները ծառայեն միայն ձևն ուսումնասիրելու համար, այլ վոչ թե արտանկարելու։

2. ՄԱՐԴ ՆԿԱՐԵԼԸ

1. Զրույց մարդու ձևապատկերի (ֆիգուրի) կազմության մասին, հատուկ աղյուսակներ ցուցադրելով (1 ժամ)։

Նկար բնականից—մարդը կանգնել է (1 ժամ)։

2. Նկար բնականից—մարդը ֆիզկուլտուրային շարժման կեցվածքում (խփում է նպատակին, պատրաստվում է ցատկելու, ուզում է վալեյբոլի գնդակը գցել (1 ժամ)։

3. Նկար բնականից,—մարդն աշխատանքային շարժման կեցվածքում (1 ժամ)։

4. Նկար բնականից, մարդը կանգնած է՝ մի վոտին հենված ֆիզկուլտուրային հագուստով (տրուսիկ, մայկա,) (1 ժամ)։

5. Նկար բնականից, մարդը կանգնած է՝ բլուզ հագած (1 ժամ)։

Դիտելիքներ յեվ ունակություններ

1. 5-րդ դասարանում ձեռք բերած ունակությունների խորացում։

2. Կարողանալ բնականից մարդ նկարել՝ տալով նրա կազմությունը և բնորոշ շարժումները։

3. Կարողանալ տալ հագուստի ծալքերի հիմնական տեսակները՝ մարդու շարժումներից կախված։

Մեթոդական ծանոթություններ

Մարդու ձևապատկերի (ֆիգուրի) կազմության և շարժման սխեմայի մասին զրույց է լինում մարդակազմության ցուցադրումով (մարդու կմախքը)։ Դրա հետ միասին մարդու շարժումների սխեման դիտվում է նաև մի աշակերտի վրա։

Ընդսմին անհրաժեշտ է աշակերտների ուշադրությունը դարձնել մարդու ֆիգուրի շարժական (վոլնաշար, անրակ) և սակավաշարժ (թիակներ, կոնք) առանցքների և լծակների ու նրանց նշանակության վրա, ինչպես և ձեռքերն՝ իրանին (անրակների և թիակների ոգնությամբ) և վոտները կոնքին—ամրացնող սիստեմի վրա։

4-րդ առաջադրությունը կատարելիս (կանգնած ու մի վոտքի վրա հենված մարդ նկարելը)։ դասատուն աշակերտներին պետք է բացատրի, թե ինչպես է կատարվում մարդու ամբողջ մարմնի ծանրության կենտրոնի տեղափոխումը, յերբ փոխվում է մարդու կեցվածքը, ընդգծելով նկարելու ժամանակ այդ հանգամանքը հաշվի առնելու անհրաժեշտությունը։

Ճիշտ այսպես եվ՝ 5-րդ առաջադրությունը (մարդն ազատ հագուստով) կատարելիս պետք է աշակերտներին ստիպել դիտել հագուստի ամենից շատ բնորոշ ծալքերի տիպերը (ուղիղ և անկյունագծային)։

Ցանկալի յե, ընդսմին, ցույց տալ աշակերտներին մարդու պատկերի (ֆիգուրի) արտանկարումները խոշոր արվեստագետների նկարներից։

Նկարներն ըստ հնարավորության մեծ չափի յեն արվում և կատարվում են տուշի, կամ կապարե վոչ կարծր մատիտով։

II. (ԳՈՒՑՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (9 ժամ)

1. Նկարել մի խումբ առարկաներ բնականից ներկերով (8 ժամ)

Նկարելու օբյեկտներ—ուսումնական պարագաներ, սանիտարական իրեր) դեղարկղ, փաթաթած բինտ, սրվակներ՝ գունավոր գեղերով, պլոներ կոլեկտիվի իրեր (թմբուկ, փող, դրոշակ, գիրք),

տան սարքավորումներ (մատուցարան, գավաթ, կճուճ), բոլորը վառ ֆոնի վրա։

Ըստ գույնի խմբերը կառուցվում են այնպես, որ աշակերտների համար հեշտ լինի գույնի յերանգային հարաբերակցությունները ըմբռնելը։

2. Լրացուցիչ վարժություններ գույնի վերաբերյալ (1 ժամ)

Ուղղանկյունները, շրջանները և յեռանկյունները հիմնական գույների (կարմիր ու կապույտ, դեղին և կարմիր, կապույտ և դեղին) կետերով, վրձնահարվածներով (мазок) և նրբագծերով լցնելը՝ գույների ոպտիկական տարածական խառնուրդ ստանալու համար։

Գույների ոպտիկական խառնուրդի ցուցադրում և դիտում պատվող հոլի վրա։

Տարբեր գույնի ֆոնների վրա, որինակ՝ դեղին, կարմիր, կանաչ, կապույտ, մոխրագույն, զոնաղան պատկերներ նկարել, որի նպատակը պետք է լինի հետևել, թե ինչպես մոխրագույնը նայած ֆոնի գույնին փոփոխվում է (գունավոր շրջապատի ազդեցությունը)։

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՅԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կարողանալ բնականից նկարելիս տալ տաք և սառ գույները։

2. Գիտենալ ներկերի ոպտիկական խառնուրդի հիմնական միջոցները։

3. Բնականից ներկերով նկարելիս՝ կարողանալ հաշվի առնել գունավոր միջավայրի ազդեցությունը։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գույնն ուսումնասիրելու վերաբերյալ դրույցներն անհրաժեշտ է տանել զննական պիտույքների զուգակցությամբ, որինակ. հոլի վրայի ներկերի ոպտիկական խառնուրդի աղյուսակը (ցանկալի յե ցույց տալ պուանտելիստների նկարների տրտանկարումները) և մոխրագույն ֆիգուրը վառ գունավոր ֆոնի վրա։

III. ԿՈՄՊՈԶԻՑԻՈՆ ՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ (8 ժամ)

1. Թեմատիկ նկար հիշողությամբ յեվ դիտողությամբ (4 ժամ).

Մարդկանց ոդում պատկերելը (բաց տարածություն)։

Թեմաներ, վորպես որինակ «Մեր փողոցը», «Միջազգային

պատանեկական որը», «Աշխատանք բանջարանոցում», կամ «Աշխատանք դաշտում» (ցանք, բերքահավաք), «Պիոները կոլխոզում», «Պատանի ավիոմոդելիստների մրցակցությունը»։

2. ԻԼՅՈՒՍՏՐԱՏԻՎ ՆԿԱՐՆԵՐ ԸՍՏ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՆ (4 ժամ)

Նկարներ՝ գրական յերկերի վերաբերյալ։

Թումանյան—«Սասունցի Դավիթը», «Անուշ»։

Փափազյան—«Լուբ-դա-լուբ»։

Շիրվանզադե—«Հրդեհը նավթահանքում»։

Գիտելիքներ յեվ ունակություններ

1. Կարողանալ ձեռք բերած կերպարվեստային գրագիտության ունակությունները և ձևի ու գույների ուսումնասիրության գիտելիքները կիրառել թեմատիկ նկարչության մեջ։

2. Կարողանալ նկարում մաքսիմալ չափով դրսևորել տվյալ թեման։

3. Կարողանալ գրական յերկերի մեջ ընտրել ամենավառ և բնորոշ տեսարանները և պատկերել նկարներում։

4. Կարողանալ գույներով տալ տեղի և գործածության ժամանակի բնույթը։

Մեթոդական ծանոթություններ

6-րդ դասարանում պետք է առանձին ուշադրություն դարձնել տարածության մեջ առարկաների ձևի ու գույնի տեսանելի փոփոխության վրա, կոմպոզիցիայի վրա, այսինքն թղթի վրա թեման ամենավառ կերպով բնորոշող որյեկտները մտածված կերպով դասավորելու վրա։ Պետք է ուշադրություն դարձնել նաև գրական յերկում նկարագրված գործող անձանց և եպոխաների բնորոշ առանձնահատկությունները տալու վրա։

Այս նպատակով ոգտակար է աշակերտի հիշողության մեջ ծանոթ յերկի բովանդակությունը թարմացնել՝ դասատուի առաջադրանքով կատարած ինքնուրույն ընթերցանությամբ, կամ դասարանում յերկի ամենաբնորոշ հատվածներն ուսուցչի կողմից կարդալու միջոցով։

Աշխատանքները կատարելուց հետո կազմակերպվում է նկարների դրական և բացասական կողմերի քննարկում։

ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

I. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ՁԵՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (10 ժամ)

1. Բնականից զանազան դիրքերում գործիքներ նկարելը (աքցան, տափակապռունկ, մկրատ) (2 ժամ)։

2. Թռչուններ (2 ժամ)։

3. Խոշոր և մանր կենդանիներ (որինակ՝ մուկ, ճագար, կատու, շուն, այծ, ձի) (6 ժամ)։

Գիտելիքներ յեվ ունակություններ

1. Կարողանալ նկարել վոչ շատ բարդ գործիք՝ տալով նրա կազմությունը, համեմատականությունը և հաշվի առնելով համաչափության առանցքը։

2. Հաշվի առնելով կմախքի կազմությունը, կարողանալ ոգտվել կոնտրուկտիվ առանցքներով՝ թռչուններ և կենդանիներ նկարելիս։

3. Կարողանալ զանազան դիրքերում և գարձումներում նկարել բնականից, խրտվիլակից, աղյուսակից՝ թռչուն և կենդանի, տալով նրանց կազմությունը, համեմատականությունը և բնորոշ ձևը։

2. Մարդ նկարել (6 ժամ)

1. Նկար բնականից։ Մարդը կանգնած է և ձեռքին, կամ ուսին բռնած խոշոր իր (զամբյուղ, արկղ և այլն) (1 ժամ)։

2. Նկար բնականից։ Մարդը նստած է, զբաղված է մի վորևե հանգիստ աշխատանքով (գիրք է կարդում, կարում է) (1 ժամ)։

3. Նկար պատկերացումով։ Մարդիկ գնում են քաղաքի (կամ գյուղի) փողոցով (2 ժամ)։

4. Նկար պատկերացումով։ Մարդիկ գնում են (կամ վազում) անտառի ճանապարհով, անտառի ծայրով, գետի յեզրով (2 ժամ)։

Գիտելիքներ յեվ ունակություններ

1. 6-րդ դասարանում ձեռքբերած ունակությունների խորացում։

2. Կարողանալ մարդիկ նկարել՝ վորոշ միջավայրում (փողոցում, բնության մեջ), տալով նրանց շարժումները, ճիշտ կազմությունը, հարաբերականությունը և բնորոշ ձևը։

II. ԳՈՒՅՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (9 ժամ)

1. Բնականից նկարել մի խումբ առարկաներ ներկերով (8 ժամ)

Աշխատելու համար որինակելի որյեկտներ։

1. Ֆուգան կամ ռանդա, տարբեր գույնի և տարբեր մշակման յենթարկված փայտի մի քանի կտորներ։

2. Մավլսկներ. մետաղի կտորներ, մեծ գործիքներ, պատրաստի մետաղյա բանվածքներ։

Ըստ գույնի խմբերը կառուցվում են ավելի բարդ յերանգային հարաբերակցություններով, քան 6-րդ դասարանում։

2. Լրացուցիչ վարժություններ (1 ժամ)

Ուղղանկյունիներ—սպիտակ և մոխրագույն՝ կտրած սպիտակ կամ մոխրագույն թղթից, կամ գծած ու ներկած և ծածկած միևնույն թափանցիկ ներկով, նպատակ դնելով ծանոթացնել թափանցիկ ներկին։ Նույն փորձն արվում է թունդ ներկի նկատմամբ, վորը հնարավորություն է տալիս կոնկրետ կերպով պարզել թունդ և թափանցիկ ներկերի հատկությունների տարբերությունը։

Գիտելիքներ յեվ ունակություններ

1. Գիտենալ թափանցիկ և թունդ ներկերի հիմնական հատկությունները։

2. Գիտենալ ներկ տալու յեղանակը՝ թափանցիկ ներկերով աշխատելիս կարողանալ նույն յեղանակը գործադրել բնականից նկարելիս։

III. ԿՈՄՊՈԶԻՑԻՈՆ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1. Դեկորատիվ—ձեվավորման աշխատանք

Պլակատի եսկիզ (2 եսկիզ) (4 ժամ)։

Պլակատների որինակներ. «Մենք պետք է շատ և լավ սովորենք, վորպեսզի մեր յերկրի համար փոխարինողներ դառնանք», «Կեցցե ամբողջ աշխարհի պիոներիան» «Պիոներ, պատրաստվիր գեպի լագեր»։

3. Իլյուստրատիվ նկարչություն

Ա. Վշտունի—«Ռամ-Ռոյը»։

Նայիրի Զարյան — «Կոլխոզի նախագահը» («Ռուշանի քարափից»)։

Ա. Բակունց — «Նամակ ռուսաց թագավորին»։

Հակոբ Հակոբյան — «Նոր առավոտ»։

Թոթովենց — «Բազու»։

Մեթոդական ծանոթություններ

Խնդիրը կոմպոզիցիոն կերպով ճիշտ լուծելու նպատակով՝ դասատուն աշակերտներին առաջարկում է մատիտով մի շարք ուրվագծեր (փոքր չափերի) անել, ընդհանուր գծերով տեղավորելով տեքստը և նկարը։ Մեկայն դասատուի ստուգելուց, դիտողություններից ու հավանությունից հետո, ավելի հաջող եսկիզն աշակերտները կատարում են գույներով։

Ա. խատանքներն ավարտելուց հետո անց է կացվում աշխատանքների դրական և բացասական կողմերի քննարկում։ Գլխավոր ուշադրությունը դարձվում է պլակատի բովանդակության, (պլակատի թեմայի բովանդակությունը դրսևորող առարկաների ընտրություն), տեքստի և նկարի դասավորության և գույնի համապատասխանության վրա։

Իլյուստրացիայի աշխատանքները տարվում են այնպես, ինչպես 6-րդ դասարանում։

7-րդ դասարանում առաջադրվում է ավելի բարձր պահանջ՝ ավյալ դարաշրջանը և գործող անձանց ու հերոսների բնութագրերը տալու նկատմամբ։

Դրա համար անհրաժեշտ է, վոր աշակերտները նախորդ ծանոթանան իլյուստրացիայի համար նախատեսած յիրկին, ապա կարդան դասարանում համապատասխան հատվածներ և իրենց ուշադրությունը կենտրոնացնեն նկարագրությունների վրա։

Ցանկալի յե այցելել թանգարաններ, կինո՝ ավյալ դարաշրջանի կենցաղը, տարազի առանձնահատկությունները, ճարտարագիտությունն ուսումնասիրելու նպատակով։

ՀՀ Ազգային գրադարան
NL0228901

51.765

Программы для средних школ

VI часть

Рисование

Гиз ССР Армении, Эривань, 1936